ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2026 թվականի N 907 - Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Գեղարքունիքի մարզ, համայնք Մարտունի, գյուղ Ծակքար, 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 2 հողամաս հասցեում գտնվող, 978 912 ՀՀ դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, 0.1236 հա մակերեսով հողամասը (17.11.2025 թ. տրամադրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 17112025-05-0012 վկայական) ամրացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմին, բժշկական ամբուլատորիա կառուցելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում իրականացնել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի միակողմանի ընդունման և հաշվառման աշխատանքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ